

«Ապագայ» այս խորագրի տակ խառնով Հայէզի Բազաքական Ժողովին Մայիս 28-ի տոնակատարութեան խնդրով «Ներատրոի Ժէլ տուած յայտարարութեան մասին, 4րդ դրէ. — «Ճ. Արստապղ Սպիկսիին եւ Հայէզի Բաղ. Ժողիին կը մնայ բացատրել թէ այս ընթացքը ո՞ր առիթնաւ կը համապայատարանէ Էջմիածնիին հրահանգներուն:

Երբայ տուիք ձեր բոլոր վաշխները՝
 ապագաները... Թուրքահեթևներ,
 իսկ որոնք են այդ մտքի մեջ
 գործող մարդիկ, շնչելու համար
 մամարիններ, որոնք պատուով աշխատում
 են իսկ նրանց հր ստանալու համար
 կոտակահուն օժնավոր...
 — Այսպես եմ ասում... Հիմա կը հաս-
 կընայի Ղուզը որ չորս թահանայի
 էլ խաղալիք ո'րգ էր պիտի փրկվե-
 ր, Լացե'ք, Լացե'ք, ձեր մեղքերը, մո-
 խիր ցանցեք ձեր զլխին: Զոր-
 ւաքեք ձեռք ձեր փայտ ստանալու:

Ը.— «Կան որոշ կասկածներ, որ
բոշ մարդերու հասցէին»
— Հա՛, ա՛յն մարդիկը որ ձեզ
խօսեալը գրին...
Իշխակին՝ որ, խօսիք, որ աս
մօթեց զարու յետէ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԱՐՁԱՆԻ ԺԱՆՏԱՆՈՒՄ ?

Ներկա օրէ ի վեր քաղաքացի-տունները սկսած է բռնի քանդել տալ Ստանդարտներու բէմերն ծայրի մասը, որ Օգոստոսին ըլլալիք քան-դումէն զերծ պիտի մընար։ Այս ա-նակնկալ քանդումին առիթ տուող պատճառը եղած է Տօքթ. Գ. Վար-դապետեանին մէկ տեղեկագիրը՝ որ կը հաստատէ ժանտախտի դժգոյքի մը ի-րականութիւնը։

Յաւուր կը լսենք թէ քանդումի աշխատանքները ապօրինի բռնու-թիւններ կը գործեն, և անտեղի մի-ջոցեպետներ տեղի կուտան։ Երէկ նոյնիսկ քանի մը հայեր բանտար-կուցած են։

ԵՐԵՎ ՓՈՔՐԻԿԵՐ ԾՈՒՎԱՄՈՆՆ

Անցեալ հինգշաբթի օրը, կէսգ-րէ վերջ ժամը 3-ին, Մազրա թա-ղէն չորս հայ փոքրիկներ՝ Միհրան և Էլի Շնորհքեան, կարապետ Մա-րանգեան և Սարգիս Խալամեան ծով կերթան լողալու։ Կնիւզ փոքրիկնե-րը սակայն անգիտակցաբար ընդոճ-կայ վրէժի մը մէջ կը գտնուին և կա-նխեւորման մը Սոհապէտ շալէպի անուն լաւ լողորդ մը ազատութեան կը փութայ, բայց չորս փոքրիկնե-րէն միայն Էլիան կրնայ ապաստու-ման մտածած վիճակի մէջ։ Միւս երե-քը կարելի չըլլար գտնել նոյն օրը։ Յաջորդ առաւօտ երեք զինքները գտնուեցան Հարաւային եզրերի վը-րայ։

ՇՕՖՏՈՐԻ ՍԸ ՇԱՅՏԱՎՈՒԹԻՒՆԸ

Անցեալ Շաբաթ գիշեր, ժամը 12ի տօնները, Ալէյէն չօֆէօր մը Յակոբ Ապազեան հայը Պէյրուսի ի-ջնցնելու համար առանձին օթիկ կը նստեցնէ և ուրիշ ճամբորդներ ալ առնելու պատրուակով Համառուն, Սուգ-էլ Դարպ, Էլն. տեղեր երկար պտտեցնել յետոյ, ամայի տեղ մը կը մարէ օթիկին լոյսերը, և կը յարձա-կի Պրն. Ապազեանին վրայ, զայն կողպապելու գիտածով։ Պրն. Ա-պազեան կ'ընդմիջայ անոր բերտ ոյժին դէմ և կը յաջողի փախուստ տալ։ Պատուաւ հագուստներով իւր գալով լուր կուտան ողորկա-նութեան, որը յաջորդ առաւօտ իսկ կը ձերբակալէ շահաւոր շօֆէօրը։

ՊՅՏԲՕՐԸ ԿԸ ՆՈՐԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ

Մ Է 2
Դամասկոսի ուսանողական յանձ-նախումբը նոր յայտարարութիւնով մը ժողովուրդը իրկին հրաւիրած է նոր պայքարի՝ ընդդէմ ելեքտրակա-նութեան և թրամվայի։

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Անցեալ կիրակի, 5 Յուլիս, կա-փալներու խաղաղապիւն մէջ տե-ղի ունեցաւ ֆուլթօրի մրցում մը Հ. Մ. Մ. և Մարաշի միւս-նիկակ մարզական խումբերու միջև։ Հ. Մ. Մ. յաղթեց 1-ի դէմ 3-ով։

ՄԵՐ ՇԵՂԱՆԱԽՐՏՆԵՐԸ

ՊԵՐՈՒԹ. — Ա. Նեան Ազգ. նիկ. Վարժարանէն նախակր-թարանի վկայական ստացած են. — Պ. Պ. Նուպար Տէմրեան, Վարդգէս Ժամկոչեան, Արամ Հա-զար, Հայկ Հաճի Գեորգեան, Բեն-եամին Պողոսեան, Յակոբ Թորոս-եան, Աւետիս Փաթմաթեան, Գաբրի-էլ Գաբրիէլ, Յարութիւն Աջա-պահեան, Զաւէն Դաւիթեան, Արա-համ Դաւիթեան։ Որիորդները կու-արդ Վսեփանեան, Զարուհի Պողոս-եան, Սիրանոյշ Արսլանեան, Մարի Պետրոսեան, Ապատուհի Թուրքալ-եան, պայծառ Դասապարեան և Նո-րիսի Ուղուրեան։

— Անգլիական Ազգայնց Գոյնէն վկայական ստացան. — Օրիորդները՝ Կրիստին Մուրադեան (ուսուցչուհի), Պերուհի Իմամեան (գոյնէ) և Ան-ժէկ Ներսիսեան (սերթիֆիկատ)։

ՊԵՐՈՒԹ. — «Միսիս-Լապի» ի պաշտօնի քննութիւնները յաջող կերպով անցուցած են. Օր. Լուսին Անտիսեան և Պ. Պ. Մելքոն Հազա-րապետեան և Թադէոս Գարաբեան։

— Յիւրեանք Գոյնէն վկայա-կան ստացած են Պ. Պ. Գրիգոր Ա-ֆաթեան, Երանեղ Դաւիթեան, Լե-ւոն Պետրոսեան և Հրաչեայ Վար-ժապետեան։

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսա նոր գրահաւորներ կը շինէ

ԲԱՐԻՉ, 2. — Ծերակոյսը 35ի դէմ 269 ձայնով ընդունեց 1931-32ին շինուելիք նոր գրահաւորներու յանձնարարական վարկը։ Գերմա-նիոյ կողմէ ծովը իջեցուցուած «Տէօյլանց» գրահաւորը ձախողու-թեամբ մասնելու համար, որոշուած է կառուարարողութիւնը նախ-ընթացի մը։ Մովսիսի միջառարար առաջարկեց որ Գերմանիա Ֆրանսա-յի երկու «Տէօյլանց»ի տեսակէն միւսը յանձնէ հասուցումներու փոխարէն, որպէսզի նոր սպառազինութեանց դէմ առնուի։

Ճարոնի եւ սովիէթ Ռուսիոյ միջեւ

ԹՕՔԻՈ, 2. — Ռուսո-գաղութական յարաբերութիւնները շատ ձգտուած են՝ անոնց միջեւ գոյութիւն ունեցած առեւտրական մը-ցումին հետեւանով։ Պատերազմի շրջանները կը լսուին։ Սովիէթ իշխանութիւնները ներկայիս մեծաքանակ ապրանքներ կը դրկեն չինական հրապարակները՝ որոնց ցարդ միայնակ սերը կը մնար Ճարոն։

Ֆայսալ թագաւորին էնկիւրի այցելութիւնը

ԹԵՀՐԱՆ, 2. — Քաղաքական քաղաքական մեծ կարեւորու-թիւն կ'ընթացէ ֆայսալ թագաւորին էնկիւրի կատարած պատգամական այցելութեան։ Լուր կայ թէ պարսից առաջին գոր-ծոց նախարարութիւնը այդ առթիւ կարեւոր հրահանգներ դրկած է էնկիւրիի իր դեսպանին։ Աս վերջինը հաւանքով մասնաւոր տեսակ-ցութիւն մը պիտի ունենայ թագաւորին հետ։

Գործադուլ Սպանիոյ մէջ

ՄԱԾՐԻՏ, 2. — Գործադուլ հռչակուեցաւ բովանդակ իրկիւն մէջ, մայրաքաղաք Վալենցիոյ, Մալախի, Բոնիֆիլիսայի, Կի-ժոնի, Մելիլայի եւ Սէվիլի մէջ։ Մալախա գիւղերուն դրկուեցան։

Ռուսիա կը պահանջէ գրաւուած նաւերը

ՎԱՐՇԱՅԻ, 2. — Մոսկուայէն կը ծանուցանեն թէ ռուս կա-ռավարութիւնը մագիւր է պահանջել ճիշտապէս կառավարու-թեան մը իրեն եւ վերադարձնել ճիշտապէս քաղաքական այս նաւերը, որոնք Վրանկիւրի բանակին նիւթը պարպելէ ետք Պիզը-թի նաւահանգստին մէջ վար գրուեցան։

Անգլիա եւ Ռուսիա

ԼՈՆԾՈՆ, 1. — ՍՄԻՐՆԻԿ Բոսնի Ռիկայի թղթակիցը կը հեռագրէ թէ մասնաւոր ազգիւրէ լուր կայ թէ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Մ. Լիթվինով իր Պիզիւն ընկեր ճամբորդութիւնը այնպէս մը պիտի կարգադրէ որ ան զուգահեռ Մ. Մ. Մաքսիմովի հետ Զէնտուրի Պիզիւն կատարելից այցելութեան։ Ան մտադիր է Անգլիոյ ոչ-յարձակողական դաշինք մը ա-ռաջարկել, ճիշդ այնպէս ինչպէս Սովիէթները որոշած են կնքել Ֆրանսա-յի հետ։

Ռուս, մամուլը եւ Մ. Հովրիի առաջարկը

ՄՈՍԿՈՒ, 3. — Ռուսական զինուոր թերթները չեն հաւատար թէ Մ. Հովրիի առաջարկը պիտի կրնայ արգիլել Գերմանիոյ յարաճուն տագ-նապը։ Միջոցառում կ'ընէ թէ պիտի և կարծիք թէ Մ. Հովրիի կողմէ պարտ-քերու և հատուցումներու կարգադրութիւնները պիտի կրնան փրկել քա-րիթախիւթները։ «Բրաւո» կը գրէ թէ Ամերիկա շտապարով թէ իր Տօքսի և Եռնիկի ծրագիրները՝ գերմանական տագնապը արգիլելու մտքը՝ ձախողած են, երբորդ նոր յուսահատական փորձ մը ևս կ'ընէ։ Գերմանիոյ կողմէ վճարուած հատուցումներու գումարը չէ միայն ազգիւրէ ստեղծուած կա-ցութեան, ան իր արմատը ունի համաշխարհային տնտեսական տագնապին մէջ։ «Բրաւո» կ'աւելցնէ թէ միայն քաղաքական յարաբերութիւն մը կըր-նայ Եւրոպան ազատել իր վրայ ծանրացող աղէտէն։

Մ. ՎԵՐԻՊԵՆԻ Եւ ՀՈՎՈՐԻ առաջարկը

ՄԵՐՈՒԹ, 3. — Մ. ՎԵՐԻՊԵՆԻ յայտարարեց թէ ինք համաձայն է Մ. ՀՈՎՈՐԻ առաջարկին՝ Արեւելեան հատուցումներու հարցին մէջ, որովհետեւ Ռուսական զինուոր թերթը ըլլալ 230 միլիոն։

Իսկ յետոյ իր աշխատանքը մտաւ։

Քանի մը վարկեան յետոյ ժառ, Քանթարեւի ծագումնաւոր տակ, իրեն մօտ փութալով, հարցուց։

Տեսա՞ք Պ. Բարիլոնը։

Հռչակաւոր գաղտնի ոստիկանը, որ կը թուէր լաւ տրամադրութիւն մը ունենալ, պատասխանեց։

— Ուղղակի իր սուղէն կուգամ, եւ երկու ըզ-գայացունց լուրեր բերի։

Մտաւանջ երեւոյթով մը լրագրողը մտիկ կ'ընէր գաղտնի ոստիկանը, որ կը շարունակէր։

— Նախ տեղեկացայ թէ «Ռուսները Յիշատակ-ները» պատերազմի սեփականութիւնը եղած է, բայց յե-տոյ Օրիորդ Տէրօշի ձեռքը անցած է։

— Սիմօնի, բացառաւոր լրագրողը ապշած։

— Այնպէս կը հետեւցնեմ թէ, շարունակեց Շան Թրօք, այդ գործողը աղկան շուրջը գտնուողներէն մէկը գողցած է զայն անկէ։

— Ինչո՞ւր հոն է որ, հաւատեց Պէլկար, ոչ համակրելի անձեր կ'ընդունէր նէ իր տանը մէջ։

— Ատանց մէջը, հարցուց գաղտնի ոստիկանը, մէկը չկայ արգիւրդ որ կը կասկածիք թէ կրնայ Պէլկարը եղած ըլլալ։

Երիտաւորը խմբակիրը վարկեան ժը խոր-տուցուեցաւ իր մտածութիւններէն մէջը, յետոյ պա-տասխանեց։

— Չեմ կրնար ունէ մէկը մտաբերել։

Շանթրօքը կրկին սկսաւ հարցափոխել։

— Ինչ կը մտածէք Օր. Տէրօշի գաղտնա-կուսին։

— Օր. Պէլկար... Դիտեմ թէ երկար ժամա-նակ է լինել Օր. Տէրօշի ծանալութեանը մէջ է... Բայց քաղաքացիական պատերազմի ժամանակ, հաշտութիւնը որ ինչի

Ֆրանսա եւ Ամերիկա կը համաձայնուին

ԲԱՐԻՉ, 3. — Ֆրանսո-Ամերիկեան բանակցութիւնները համաձայնու-թեան մը յանգեցան։ Համաձայնութեան պայմանները, որոնք այսօր նա-խարարաց խորհուրդի վաւերացման պիտի ենթարկուին, կը նուիրագործեն Ֆրանսական հակառակարկին զինուոր սկզբունքները։ Գերմանիոյ Ֆրանսա-յի տալիք ոչ-պայմանաւոր հատուցումներու գումարները նոյնութեամբը պիտի վճարուին և Ֆրանսա զանոնք փոխ պիտի տայ ոչ թէ գերման կա-ռավարութեան այլ գերմանական երկաթուղիներուն։

ԲԱՐԻՉ, 3. — Կը կարծուի թէ Անգլիոյ առաջարկած խորհրդաժողովը պիտի գումարուի Յուլիս 20ի մօտերը։ Հետզհետէ անհրաժեշտութիւն մը կ'ըլլայ այդ խորհրդաժողովին գումարումը։

Իտալիա կը գործադրէ մօրաթօրիումը

ՌԻԱԶԻԿԻԹԸ. — 1. — Իտալական կառավարութիւնը Ամերիկայի ար-տաքին գործոց նախարարութեան իմաց տուաւ թէ Յուլիս 1ին Իտալիոյ վճարուելիք միջազգային պարտքերու զանձումը պիտի գործադրէ առժա-մաբար։ Իսկ այդ թուականին իր կողմէ վճարուելիք պարտուց գումարը նոյնպէս առժամաբար պիտի յանձնէ Հատուցումներու Միջազգային դրա-մատան։

Հ. Բ. Ը. Մ. Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՒԱՆԵՆ

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ԲՈՆՍՈՒ ՇԵՏ

1. — Արտաքին Գործոց նախարարութեան Հրահրով, Միւսթեան յար-գու նախագահը այդ Պաշտօնատան մէջ կարեւոր խորհրդակցութիւն մը ու-նեցաւ Սուրիոյ Բարձր Դատարար Մ. Բոնսոյի հետ, Պէյրութի ու Հայկա-թէմբըր ընկեր զաղթականներուն տեղաւորման և զինուորաբար Յու-նաստանի գաղթականներուն վիճակի մասին։

Յետոյ, Տ. Կիւլպէնկեան մասուս 24 ին իր ապարանքին մէջ հաջորդեց մը տուաւ ի պատիւ Տ. և Տիկին Բոնսոյի, որուն ներկայ էին նաեւ Ար-տաքին Գործոց նախարարութեան բարձրագոյն պաշտօնատարները, Պար-սից գեապան Ալլա Խան, և ուրիշներ։

2. — Նախագահ Տ. Կիւլպէնկեան և վարչ-պատուիրակ Տ. Մայիզ-եան նոյնպէս առաջակցութիւններ ունեցան, վերջինը գրասենեակին մէջ, Պարսից գաղթականներու տեղափոխման հարցին շուրջ, Ազգերու Ժողովին մօտ վերջերս հաստատուած գաղթականներու միջազգային ճանաչման Գրասենեակի նախագահ Մ. Մաքս Խալէլի, քարտուղար Մ. Ճոնսոնի եւ Սուրիոյ պատուիրակ Մ. Պիւրիէի հետ. այդ տեսակցութեան կը մասնակ-ցէր նաեւ Գաղթ. Կեդր. Յանձնարարութիւնի ընդհանուր քարտուղար և Միւս-թեան պատուիրակ Տ. Լ. Բաշալեան։

3. — Փոխանակուած կարծիքները և տրուած հաւատարմութիւնը յոյս կը ներշնչէր թէ կարելի պիտի ըլլայ երկու տարուան միջոցին տեղաւորել Սու-րիոյ անտուն գաղթականները, ինչպէս նաեւ բարեկեան Յունաստանի մաս մը անգործ որբերուն և գաղթականներուն վիճակը։

Հ. Բ. Ը. Միտքիւնը իր քարոյական և ներթափան մասնակցութիւնը պիտի բերէ այդ կենսական գործերուն։ Անմիջապէս պիտի ձեռնարկուի «Բարեկեան» գիւղի կառուցման, Միւսթեան կողմէ տրամադրուած 1500 տնկիւնական ոսկիով։

“ՀՕԿ”-Ի ԴԻՒԱՆԵՆ

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԺԻ ԱՂԵՏԵԼՈՑ

ԺԲ. — 8 Ա Ն Կ

500 Ղրշ. Սրկն. — Տիկ. Արշալոյս Ազրեան, Նիկողոս Գապիւ-	1000
եան, 100 Ղրշ. Սրկն. — Տիկ. Պաղտատ Երեւանեան, Ռուբէն Կարա-	200
պետեան, 50 Ղրշ. Սրկն. — Դանել Պալեան, Բէնեամին Թագաւորեան, Գրի-	150
գօր Գրիգորեան, Բէմբի Սահակեան վարժարանէն 90 աշակերտներ 5 Ղրշ.	450
սրկն.ով և 1 աշակերտ 7 Ղրշ. Սրկն.ով, (Շաբ) Գումար	1807
Նախորդ Գումար	22,253
Ընդհ. Գումար. —	24,060

Երկրաշարժի Աղէտելոց Օգնութեան Յանձնարարութիւնը

